Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ, *Երևանի պատմությունը (1801—1879)*, Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն. 1959, 672 էջ, գինը 24 ռ. 35 կ.:

Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը Արևելյան Հայաստանի կենտրոն է դարձել XV դարի կեսերին, բայց նա եղել է հնագույն բերդ-բնակավայր։ Հնագետները ու պատմաբանները գտնում են, որ Երևանն ունի 2742 տարվա պատմություն։

Իր գոյության ընթացքում Երևանը բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների ավերիչ արշավանքներին։ Միայն թուրք-պարսկական պատերազմների ընթացքում (XVI—XVIII դդ.) Երևանը 14 անգամ ձեռքից-ձեռք է անցել ու ավերվել։ 1827 թվականին ազատվելով պարսկական ծանր լծից, Երևանը, ճիշտ է, դանդաղ, բայց որոշակի աշխուժացում սկսեց ապրել, սակայն նրա բուռն զարգացումը սկսվեց միայն սովետական կարգերի պայմաններում։ Երևանն այժմ Սովետական Միության արդյունաբերական ու կուլտուրական խոշոր և գեղեցիկ քաղաքներից մեկն է, ավելի քան կես միլիոն ազգաբնակչությամբ։

Սովետական պատմագրության կողմից դեռևս բազմակողմանի ու լուրջ կերպով չի ուսումնասիրված Երևանի ամբողջական պատմությունը, առանձնապես նրա սովետական շրջանի պատմությունը։ Այդ տեսակետից միանգամայն ողջունելի է վերջերս Երևանի Պետական համալսարանի հրատարակչության կողմից դոցենտ Թ. Հակոբյանի «Երևանի պատմությունը (1801—1879 թթ.)» խորագիրը կրող լուրջ, ստվարածավալ աշխատության լույս ընծայումը։

Գրախոսվող գրքի հեղինակը օգտագործել է բազմաթիվ սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ։ Սկզբնաղբյուրների թվում են արխիվային մեծաթիվ փաստաթղթեր, որոնց մի մասը հրապարակվում է առաջին անգամ։ Աշխատության մեջ տրված են նաև տասնյակ հետաքրքրքրական նկարներ, քարտեզներ, աղյուսակներ, որոնք լրացնում են բուն տեքստում արծարծված հարցերը։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է երկու բաժնից, որոնցից առաջինն ընդգրկում է 1801—1828 թթ., իսկ երկրորդը՝ 1828—1879 թթ.։

Երևանի 1801 թ. մինչև 1828 թ. պատմությունը շարադրելիս, հեղինակը հարուստ փաստերի հիման վրա հանգամանորեն ցույց է տվել, որ Հայաստանը պարսկական և թուրքական բռնապետությունների միջև բաժանվելուց հետո Պարսկաստանին անցած Արևելյան Հայաստանում կազմակերպվում է Երևանի խանությունը, Երևան կենտրոնով։ Երևանի խանները նշանակվելով պարսկական շահերի կողմից, խանության լատարյալ ինքնակալ տերն ու տնօրենն էին։ Նրանք իրենց դիվանների (վարչական հիմնարկների, պաշտոնյաների) միջոցով անասելի շահագործման ու կողոպտման էին ենթարկում խանության և նրա կենտրոնի ազգաբնակչությանը։ Հեղինակն այստեղ վկայակոչում է ժամանակակից հայ պատմիչներին և հայ ժողովրդի վերքերի երգիչ, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանին, որը Երևանի բերդը «հազար գլխանի դև» է անվանում, «մարդակեր բերդ», «ողողի ու ավազակի բնակավայր»։ Նշված բաժնում հեղինակը անդրադարձել է նաև պարսկական պետության կողմից նվաճված ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի նկատմամբ վարվող ասիմիլյացիոն քաղաքականությանը։ Այստեղ Թ. Հակոբյանը ցույց է տվել, որ Երևանի խանության հայ և ադրբեջանցի բնակչությանը պարտադրվում էր պարսկերեն լեզուն, պաշտոնական գրագրությունները վարվում էին պարսկերեն, հալածվում էր նվաճված ժողովուրդների լեզուն, կուլտուրան ու կենցաղը։

Անդրադառնալով Երևան քաղաքի ընդհանուր բնութագրմանը, հեղինակը միանգամայն ճիշտ կերպով ցույց է տվել, որ Երևանը իր վարչական նշանակությամբ, բնակչության զբաղմունքով և էկոնոմիկայով XIX դարի առաջին քառորդում ներկայացնում էր տիպիկ ֆեոդալական մի քաղաք։ Մինչև XIX դարի 20-ական թվականները, ընդգծում է հեղինակը, Երևանում չի եղել որևէ գործարան, իսկ եղած մի քանի տասնյակ ձեռնարկությունները մանր արհեստանոցներ էին, որոնցում աշխատանքը կատարվում էր ձեռքով և որոնք բավարարում էին միայն տեղական բնակչության կարիքները։ Հեղինակի հաշվումներով, Երևանում եղած արհեստանոցների թիվը XIX դարի 20-ական թվականների վերջում հասնում էր 43-ի, իսկ արհեստավորների թիվը՝ 746-ի, որոնք ընդգրկված էին ավելի քան 30 համքարություններում։

Անցնելով Երևանի առևտրական հարաբերություններին, աշխատության հեղինակը ճիշտ է բնութագրում, որ ֆեոդալական Պարսկաստանում և նրա վարչական միավորներից մեկը կազմող Երևանի խանությունում առևտրի լայն զարգացման համար չկային բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ, որ նրա ծավալմանը խանգարում էին բնական փակ տնտեսաձևը, ֆեոդալական մաքսային սիստեմը, ճանապարհների վտանգավորությունը, չափ ու

կշռի անորոշությունն ու բազմազանությունը, բնակչության ցածր գնողունակությունը և ծանր պատերազմները, որոնք Սրեանի խանությունում այնքան հաճախ էին դարձել XVIII դարի վերջում և XIX դարի առաջին քառորդում։ Միևնույն ժամանակ հեղինակը ցույց է տալիս, որ Երևան քաղաքի ներքին և արտաքին առևտրի համար պայմաններն այլ էին. այդտեղ կային որոշ ազդակներ, որոնք նպաստում էին դրանց զարգացմանն ու ծավալմանը։ Երևանում գտնվող սարդարը, նրա պալատի աստիճանավորները, քաղաքի խաները, բեկերը, մելիքները, միրզաները և այլ կարգի պաշտոնյաները իրենց հսկայական եկամուտների մեծ մասը ծախսում էին Երևանի շուկաներում։ Երևանում առևտրով էին զբաղվում քաղաքի բնակչության մեծ մասը՝ սարդարից ու պրոֆեսիոնալ վաճառականներից սկսած մինչև արհեստավորներն ու այգեգործները։ Հատկապես սարդարը և պրոֆեսիոնալ վաճառականները մեծ եկամուտներ էին ստանում Երևանի ներքին և արտաքին առևտրից։ Հեղինակի հաշվումներով այդ ժամանակ Երևանում կար 5 շուկա և 851 խանութ-կրպակ։ Հեղինակը եզրակացնում է, որ պարսկական տիրապետության հատկապես վերջին շրջանում Երևանը Արևելքի առևտրի ամենակարևոր ու մեծ կետերից մեկն էր։ Սակայն այդտեղ նա զգուշացնում է, որ այդ ժամանակաշրջանի Երևանի ներքին և արտաքին առևտուրը համեմատաբար համեստ չափեր ուներ, որ Երևանի վաճառականական դասը դեռևս չէր ձևավորվել որպես քաղաքային խոշոր բուրժուազիա, իսկ նրա առավել աչքի ընկնող և հարուստ ներկայացուցիչների կապիտալները չէին անցնում մի քանի հազար ռուբլու սահմաններից։

Հաջորդ ենթարաժնում հեղինակը հանգամանորեն ցույց է տվել, որ Երևանի տնտեսական կյանքում արհեստագործության և առևտրի հետ միասին խոշոր գեր են խաղացել այգեգործությունը, բանջարաբուծությունը, երկրագործությունը և նույնիսկ անասնապահությունը։ Այդ ենթարաժնում բավական ընդարձակ կերպով քննարկվում են Երևանի հողային հարաբերությունները։ Ցույց է տրվում, որ Երևանի արտաքին գիծը կազմում էր մոտավորապես 28 կիլոմետր և որ բացի դրանից քաղաքին հարող 600—700 դեսյատին տարածություն ևս մշակվում էր քաղաքացիների կողմից։ Քաղաքի հողերի մեծ մասը պատկանում էր սարդարին, քաղաքի մյուս խաներին, բեկերին, մելիքներին, եկեղեցիներին ու վանքերին։ Երևանում սարդարն ուներ 14 մեծ այգի, Էջմիածինը՝ 8 այգի։ Երևանում այգիներ ունեին նաև Սևանա վանքը, Գեղարդա վանքը, Երևանի եկեղեցիները։ Վերոհիշյալ կալվածատերերը իրենց հողերն ու այգիները մշակել էին տալիս քաղաքի աշխատավոր բնակչության միջոցով, գերազանցապես կոռային աշխատանքով։

Երևանի բնակչության հասարակական կյանքը քննարկելիս, Թ. Հակոբյանը ցույց է տվել, որ XIX դարի առաջին քառորդում Երևանի մոտ 12 հազար բնակչությունը բաղկացած էր հայերից, ադրբեջանցիներից և մասամբ պարսիկներից ու թուրքերից։ Իշխող դասի մեջ մտնում էին սարդարն ու նրա պաշտոնյաները, խաները, բեկերը, մելիքները և բարձր հոգևորականությունը, իսկ քաղաքային դասի մեջ՝ արհեստավորները, մանր առևտրականները, ինչպես և գյուղատնտեսությամբ զբաղվողները, որոնց վրա ընկած էր հարկային ծանր լուծը։ Ուղղակի և անուղղակի հարկերը, որոնք մի քանի տասնյակի էին հասնում, հարկադիր աշխատանքները, բռնությունները, կաշառակերությունները, բազմաթիվ անօրինականությունները քաղաքի աշխատավոր բնակչությանը հասցրել էին անտանելի թշվառ պայմանների։ Դրան հակառակ, շահագործողները, որոնք կազմում էին Երևանի ամբողջ բնակչության մոտ 12 տոկոսը, ապրում էին արևելյան ճոխությամբ և գիզել էին հսկայական հարստություններ։ Երևանում հասարակության սոցիալական այդ հակադիր խմբերի փոխհարաբերությունները քննարկելիս հեղինակը խիստ քննադատության է ենթարկում և իրավացիորեն մերժում Երվանդ Շահազիզի՝ այն սխալ կարծիքը, որ իբր Երևանում, հատկապես վերջին սարդարի ժամանակ, «դառը չքավորություն չի եղել»։

Քաղաքի ընդհանուր նկարագիրը և ներքին կյանքը ներկայացնելիս, աշխատության հեղինակը հայ աղբյուրներից բացի օգտագործել է նաև մի շարք օտարերկրյա և ռուս ճանապարհորդների ու հեղինակների գործերը, որոնց թվում են՝ Շարդենը, Մորիերը, Գրիբոյեդովը, Շոպենը, Լինչը և ուրիշներ։ Ամփոփելով եղած տվյալները, Թ. Հակոբյանը նշում է, որ Երևանը նշված ժամանակաշրջանում ասիական մի հետամնաց քաղաք էր, կավակերտ տներով, նեղլիկ, ծուռումուռ և կեղտոտ փողոցներով։ Քաղաքը չուներ կոմունալ նվազագույն հարմարություններ, խմելու համար պիտանի ջուր, լուսավորություն, բժշկություն, հիվանդանոցներ։ Հաճախակի կրկնվող համաճարակ հիվանդությունները մեծ զոհեր էին պատճառում քաղաքի բնակչությանը։ Գրքում մանրամասնորեն նկարագրված են քաղաքի երեք գլխավոր թաղամասերը՝ Շահարը, Թափաքաշը և Դամիրբուլաղը, ինչպես նաև գլխավոր շինությունները՝ բերդը, եկեղեցիները, մզկիթները, իջևանները, կամուրջները։ Եզրակացությունում ասված է, որ քաղաքում չկար ոչ մի

պլանավորում, որ նա վեր էր ածվել անկանոն կառուցված քսենոֆոնյան խրճիթների մի հրսկայական քաոսի։

Գրախոսվող աշխատության երկրորդ բաժինը, որն ընդգրկում է 1828—1879 թվականները, բովանդակում է նշված ժամանակաշրջանում Երևանի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի փոփոխություններ։ Այստեղ հեղինակը հանգամանորեն շարադրել է ռուսների կողմից Երևանի ազատագրումը պարսկական լծից և ցույց է տվել, որ Արևելյան Հայաստանի և նրա կենտրոն՝ Երևանի միացումը Ռուսաստանին ունեցավ խոշոր պրոգրեսիվ նշանակություն։ Այդ բաժնում այնուհետև հեղինակը ցույց է տվել, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո, 1828—1879 թթ. ընթացքում Երևանը եղել է երեք կարգի վարչական միավորների կենտրոն՝ սկզբում Հայկական մարզի, ապա Երևանի գավառի, իսկ 1850 թվականից՝ Երևանի նահանգի և այդպես էլ մնացել է ցարական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում։ Հեղինակը մանրամասն կանգ է առնում Երևանի վարչության կազմի, նրա մեջ կատարվող փոփոխությունների, վարչության ապարատի բյուրոկրատական ղեկավարության և բնակչության նկատմամբ թույլ տված նրա կամայականությունների վրա։ Նա կոնկրետ փաստեր է բերում, թե ինչպես ցարական աստիճանավորների դեմ Երևանի բնակիչները խիստ բողոքներ են ներկայացրել Նիկոլայ I-ին, երբ 1837 թվականին ցարը եղել է Երևանում։

Ընդհանրացնելով բերված հարուստ փաստերը հեղինակը գտնում է, որ ցարական Ռուսաստանի գաղութային քաղաքականության պատճառով Երևանը մինչև սովետական կարգերի հաստատումը շարունակում էր մնալ գերազանցապես արհեստագործության, մանրածախառնատրի և այգեգործության քաղաք։ Այդ ընդհանուր բնութագրումից հետո հեղինակը բազմաթիվ փաստերով ու թվական տվյալներով ցույց է տալիս, որ Երևանը Ռուսաստանի կազմում, պարսկական տիրապետության համեմատությամբ, այնուամենայնիվ ունեցել է զգալի առաջադիմություն։ Այդ ժամանակաշրջանում աճել է արհեստավորների թիվը, առաջացել են մի քանի տասնյակ նոր արհեստներ, արհեստանոցներ (որոնցից մոտ 15 ձեռնարկություն համարվում էր «ֆաբրիկա» կամ «գործարան»), աշխուժացել է ներքին և արտաքին առևտուրը, բարելավվել են առևտրական ճանապարհները, կարգավորվել է մաքսային սիստեմը, որոշ չափով բարձրացել է այգիների ու հացահատիկների բերքատվությունը և այլն։ Մեծ փոփոխություն է կատարվել նաև Երևանի բնակչության ազգային կազմի մեջ։ Այդ փոփոխությունները հեղինակը բացատրում է Պարսկաստանից ու Արևմտյան Հայաստանից հայերի՝ Արևելյան Հայաստան ներգաղթելու, Երևանում ռուսական աղանդավորներ բնակեցնելու, Երևան քաղաքում ռուսական աստիճանավորների հաստատման, ինչպես նաև բարձրաստիճան շատ պարսիկների Երևանից Պարսկաստան տեղափոխելու հանգամանքներով։

Հեղինակի հաշվումներով 1828—1879 թվականներին Երևանի բնակչությունը շատ դանդաղ է աճել։ 50 տարվա ընթացքում նրա բնակչության թիվը գրեթե մնացել է նույնը։ Երևանի բնակչության թիվը սկսել է արագ աճել 1880-ական թվականներից գլխավորապես շնորհիվ Անդրկովկասում կապիտալիզմի համեմատաբար արագ զարգացման։

Նույն ժամանակաշրջանում զգալի փոփոխություններ են կատարվել նաև քաղաքի վերակառուցման ու բարեկարգման, ինչպես նաև կուլտուրայի ու լուսավորության բնագավառներում։ Հեղինակը փաստեր է բերում, որ 1850-ական թվականներից, երբ Երևանը դարձել էր նահանգի կենտրոն, քաղաքը պլանավորելու փորձեր են կատարվել։ Այդ պլանավորման համաձայն բացվել են մի քանի տասնյակ ուղիղ փողոցներ, կառուցվել են պետական ու մասնավոր մի շարք նոր շենքեր, որոնք իրենց ճարտարապետությամբ ու հարմարություններով խիստ կերպով տարբերվում էին նախկին կավակերտ շինություններից։ Ներգաղթի և նորքը քաղաքին միացնելու հետևանքով ավելացել էր բուն քաղաքի գրաված տարածությունը, առաջ էին եկել նոր թաղեր, կառուցվել նոր իջևաններ, խանութներ, ջրավազաններ և այլն։

Փոփոխությունները ավելի զգալի էին կուլտուրայի, լուսավորության և արվեստի բնագավառներում։ Երևանում բացվել էին մի շարք աշխարհիկ և հոգևոր դպրոցներ, որոնց մեջ աչքի էին ընկնում Գավառական, Հոգևոր թեմական, Հռիփսիմեի, Գայանեի և Նորքի ծխական դպրոցները։ Այստեղ հեղինակը ցույց է տվել քաղաքի դպրոցական-լուսավորական և հասարակական կյանքում Խաչատուր Աբովյանի և Զաքարիա Ագայանի կատարած մեծ ծառայությունները, Երևանում հանրային գրադարան ստեղծելու փորձերը, քանդակագործության, ճարտարապետության, նկարչության, թատրոնի զարգացումը և այլն։

Աշխատության վերջում հեղինակը եզրակացնում է, որ 1828—1879 թթ. ընթացքում կատարված փոփոխությունները շատ չնչին էին՝ քաղաքի ընդհանուր դրությունը փոխելու համար։ Երևանը շարունակում էր մնալ որպես հետամնաց գավառական քաղաք, թույլ զարգացած

արհեստագործության և վերին աստիճանի սահմանափակ ծավալ ունեցող առևտրի քաղաք, մեկ տասնյակ հազարից մի փոքր ավելի բնակչությամբ։

Թ. Հակոբյանի այս արժեքավոր աշխատության մասին հարկ ենք համարում նաև մի քանի դիտողություններ անել։

1. Ժամանակագրական առումով աշխատությունը ընդգրկում է 1801—1879 թվականները։ Երևանի պատմության այդ հատվածի ուսումնասիրության սկիզբը հեղինակը ընդունել է 1801 թիվը, նկատի ունենալով Վրաստանի միացումը Ռուսաստանին։ Մեր կարծիքով, ժամանակի այսպիսի սահմանազատումն անհիմն է ու մեխանիկական, քանի որ Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Երևանի քաղաքական, հասարակական, վարչական կազմի, էկոնոմիկայի ու կուլտուրայի բնագավառներում էական փոփոխություններ չեն կատարվում։ Ավելի կլիներ, և աշխատությունը լրջորեն կշահեր, եթե հեղինակը բավարարվեր մի ակնարկով՝ պարսկական տիրապետության ժամանակաշրջանի Երևանի պատմության վերաբերյալ և իր բուն ուսումնասիրությունը նվիրեր Երևանը Ռուսաստանին միացնելու և նրա հետագա պատմությանը, քանի որ Երևանի համար Ռուսաստանի տիրապետության օրոք ստեղծվում են նոր պայմաններ, ստեղծվում է նոր դարագլուխ։

2. Հեղինակը, ինչպես արդեն ասվել է, իր աշխատությունը բաժանել է երկու մասի։ Առաջին բաժինը վերնագրված է «Երևանը 1801—1828 թթ.», երկրորդ բաժինը՝ «Երևանը 1828—1879 թթ.»։ Այդ երկու բաժիններն էլ ունեն համարյա նույն ենթավերնագրերը։ Առաջին բաժնում եղած «Քաղաքի տնտեսական կյանքը», «Բնակչությունը և նրա հասարակական կյանքը», «Կուլտուրան» վերնագրերը նույնությամբ կրկնվում են երկրորդ բաժնում։ Այդ պատճառով էլ հեղինակը անխուսափելիորեն մի շարք կրկնություններ է կատարում արհեստների, համքարությունների, առևտրի, քաղաքի ու նրա ազգաբնակչության ներքին կյանքի և այլ հարցերի մասին խոսելիս։

3. Աշխատությունը գրելիս հեղինակը օգտագործել է բազմաթիվ հարուստ սկզբնաղբյուրներ ու ուսումնասիրություններ, սակայն նրանում կան նաև մեծ թվով երկրորդական տվյալներ, որոնք, մեր կարծիքով, չեն հարստացնում գրքի բովանդակությունը, այլ ընդհակառակը՝ ծանրաբեռնում են այն և երբեմն էլ պատմության գլխավոր հարցերը խճճում երկրորդական հարցերի հետ։

4. Երևանի համքարությունների մասին խոսելիս, աշխատության հեղինակը բավականին ընդարձակ էքսկուրս է կատարում դեպի Անդրկովկասի մյուս քաղաքների համքարությունների պատմությունը, սակայն Երևանի համքարությունների մասին կոնկրետ տվյալներ քիչ է բերում և ցույց չի տալիս Երևանի համքարությունների առանձնահատկությունները՝ Անդրկովկասի մյուս քաղաքների, մասնավորապես Թբիլիսիի և Ախալցխայի համքարությունների համեմատությամբ։ Հաճախ էլ Երևանի համքարությունների մասին հեղինակի եզրակացությունները փաստերով չեն հիմնավորվում (տե՛ս գրքի 401—442 էջերը)։

5. Գրախոսվող աշխատությունը շարադրելիս հեղինակը խիստ սահմանափակ չափով է օգտագործել ազգագրական նյութերը։ Մեր կարծիքով, աշխատություններ կշահեր, եթե աշխատության վերջում մի առանձին բաժին նվիրվեր Երևանի ազգագրությանը, որպեսզի ընթերցողը կարողանար նաև ծանոթանալ Երևանցիների նիստուկացին, սովորություններին, տոնական ու հարսանեկան ծիսակատարություններին, խաղերին և այլն։

6. Գրախոսվող աշխատության մեջ թույլ են ցույց տրված պարսկական տիրապետության պայմաններում նվաճված ժողովուրդների, այդ թվում և երևանցիների ազգային ու կրոնական հալածանքները, չնայած, որ այդ մասին բավականին հարուստ փաստեր կան ոչ միայն Երևանի անցյալի պատմությունից, այլև հեղինակի գրքի ընդգրկած ժամանակաշրջանում։

7. Աշխատությունում կան լեզվական ոչ ճիշտ արտահայտություններ, որոշ բառերի սխալ գրության ձևեր, բազմաթիվ կրկնություններ (օրինակ, Նորքը Երևանին միացնելու մասին 6 տեղ հիշատակված է), հին ու նոր չափերի ու կշռի խառը գործածում և այլն։

Թ. Հակոբյանի այս ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ լուրջ, ուշադրության արժանի և արժեքավոր աշխատություն է, որի վրա հեղինակը թափել է երկարատև քրտնաջան ու մանրազնին աշխատանք։ Այս գիրքը կարդալուց և Երևանի դառը անցյալը ուսումնասիրելուց հետո ավելի պարզ են դառնում Սովետական Հայաստանի և նրա մայրաքաղաք Երևանի վերջին 40 տարվա աննախընթաց նվաճումները։

Անցյալի Երևանն այժմ գոյություն չունի, Երևանը վերածնվել է, աճել, մի հոյակապ սոցիալիստական քաղաք է դարձել։ Սովետական Երևանը անճանաչելի է։ Մեր պատմաբանների առաջնահերթ խնդիրն է՝ կարճ ժամկետում ստեղծել Երևանի ամբողջական պատմությունը, վեր հանելով առանձնապես Սովետական Երևանի բուռն զարգացումը։

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ